Ս.ՇՏԻԿՅԱՆ

«ԱՎԱՆԳԱՐԴԻ» ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Չեմ թաքցնում, որ ինձ համար շատ շոյող ու ոգևորիչ էր այն հանգամանքը, որ իմ «Ընդամենը չորս տարի» խորագիրը կրող հոդվածը («Ավանգարդ», № 98) այդքան լայն ուշադրության ու հետաքրքրության է արժանացել։ Դրա որոշակի ապացույցն է թե՛ խմբագրություն, և թե՛ տուն առաքված բազմաթիվ նամակները, հեռախոսազանգերը, բանավոր ասված դրվատական կարծիքները։ Իմ շնորհակալությունը հայտնելով բոլորին, ավելացնեմ, որ այդ ուշադրությունը մեծապես պարտավորեցնում է ինձ և հետևաբար էլ ավելի լավ աշխատելու, այդ բնույթի ավելի ուշագրավ հոդվածներով հանդես գալու ներքին խթան է հանդիսանում։

Անդրադառնալով բազմաթիվ այլ խնդիրների, նամակագիրների գերակշիռ մասին, սակայն, հետաքրքրել է նույն հարցը, որը նրանք ձևակերպել են գրեթե նույն բառերով՝ ինչպիսին է եղել իմ «հերոսի» կյանքի հետագա ուղին։ «Խնդրում եմ պարզել և թերթի միջոցով հրատարակել տվյալներ Պատրիկ Սարոյանի հետագա ճակատագրի մասին» իր նամակում գրում է դոկտոր-պրոֆեսոր Խ. Բաղալյանը։ «Շատ ուսանելի և հետաքրքիր կլիներ իմանալ Սարոյանի հետագա ճակատագիրը» գրում է Կուսակցության, աշխատանքի և Հայրենական պատերազմի վետերան Արմ. Ղուկասյանը։ «Նախ՝ Սուրեն Շտիկյանին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը, երկրորդ՝ խնդրում ենք հրապարակել Պատրիկ Սարոյանի հետագա ճակատագրի մասին» գրում է աշխատանքի վետերան Ռոզա Գյուրջյանը և այլն։ Եվ այս հարցը, կրկնում եմ, կա բազմաթիվ նամակներում։

Արդ, ինչպես է դասավորվել Պատրիկ Սարոյանի կյանքի հետագա ուղին։

... Բանտից ազատվելուց հետո լավ-վատ հազիվ էր ապաքինվել, երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը և անմիջապես հաջորդ օրը՝ 1941 թ. հունիսի 23-ին Սարոյանը զորակոչվել է բանակ։ Նրան վիճակվել է կռվել Կերչի ռազմաճակատում շուրջ յոթ ամիս, երկու անգամ ծանր վիրավորվել և երկարատև բուժման «դատապարտվել»

նախ՝ Նովոռոսիյսկում, ապա Երևանում։ Բժշկական հանձնաժողովը նրան որակավորել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ և զորացրել տուն։

Պատերազմի ավարտից հետո Մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի ռեկտորատի հրավերով Պատրիկ Սարոյանը սկսել է տպարանի հիմնման կազմակերպչական աշխատանքները, որտեղ հետագայում հրատարակվել են դասագրքեր, գիտա-մանկավարժական գրականություն, ուսումնական ձեռնարկներ։ Մանկավարժական ինստիտուտի հրատարակչական այդ կենտրոնը օր ավուր աճելով ու զարգանալով, գոյություն ունի առ այսօր։ 1955 թ. «Գլխպոլիգրաֆիրատի» հրամանով նշանակվել է «ՈՒսմանկհրատի» փոխտնօրեն, և չնայած հանդիպող դժվարություններին, կազմակերպել և գիտա-հրատարակչական կայուն հիմքերի վրա է դրել գործը։ Այդ հրատարակչությունը հետագայում վերանվանվել է «Լույս» և շարունակում է իր գոյությունը մինչև հիմա։ Յոթ տարի անց՝ 1962 թ., ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրավերով նշանակվել է շրջանային տպարանների ընդհանուր վերահսկիչ և ջանք ու եռանդ չի խնայել հանրապետության շրջանային հրատարակչակայն այդ միավորները կարգի բերելու, նրանց աշխատանքը շահութաբեր դարձնելու համար։ 1967 թվականին Պատրիկ Սարոյանը տեղափոխվում է իր իսկ հիմնադրած տպարանը, որտեղ և աշխատում է առ այսօր։

Այս բեղմնավոր գործունեության ընթացքում Սարոյանը պատրաստել է հրատարակչական գործի բազմաթիվ մասնագետներ, որոնց անունները լայնորեն հայտնի են թե՛ հանրապետության սահմաններում, և թե՛ սահմաններից դուրս։ Նրա ջանադիր աշխատանքով են լույս աշխարհ եկել ավելի քան հարյուր՝ ամենատարբեր բնույթի գրքեր, որոնք իրենց վրա ունեն «Տեխնիկական խմբագիր Պ.Սարոյան» նշումը։ Այդ ինքնամոռաց աշխատանքի բնականոն գնահատությունն են բազմաթիվ պատվոգրերն ու շնորհակալագրերը, յոթ շքանշաններն ու մեդալները, որը նա ստացել է շուրջ յոթանասուն տարվա աշխատանքի ընթացքում։

Որպես վերջաբան. Լուսավորության մինիստրության կոլեգիան, Մանկավարժական ինստիտուտի ռեկտորատը և «Պոլիգրաֆ» հրատարակության

վետերանների վարչությունը բազմիցս հարց են հարուցել համապատասխան կազմակերպությունների առջև՝ Պատրիկ Սարոյանին «ՀՍՍՀ Կուլտուրայի վաստակավոր աշխատողի» պատվավոր կոչման արժանացնելու համար, սակայն պատասխանը եղել է անտարբեր լռությունը։ Այսպիսի աշխատառճը, որն ընդունելի էր մի քանի տարի առաջ, այսօր՝ հրապարակայնության ու դեմոկրատիայի ներկա պայմաններում, արդեն սոսկ ծիծաղ ու վրդովմունք է առաջացնում։ Սպասենք համապատասխան կազմակերպությունների պատասխանին...

Ավանգարդ, 1988, № 136, նոյեմբերի 4